ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բոլորում է Սովետական Հայաստանի 40 տարին՝ հայ ժողովրդի ազատագրության պանծալի քառասունամյակը։ Դարերի խորքից եկող հայ ժողովուրդը իր պատմական կյանքի ընթացքում ենթարկվել է նվաճողների դաժան բարբարոսություններին, արտաքին և ներքին կեղեքողների հրեշավոր հարստահարումներին։ Եվ, սակայն, դիմացել է ամեն տեսակ արհավիրքների, դիմացել ու չի դադարել երբեք կուլտուրական արժեքներ ստեղծելուց, չի մոռացել իր լեզուն ամենածանր ճնշումների տակ անդամ, դիմացել է ու հասել Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի դարին և Լենինյան մեծ պարտիայի ծրագրով ու կամքով ստացել իր վերջնական ազատագրումը։ Փարվելով Սովետական իշխանությանը, հավատով, վստահությամբ ու սիրով մտնելով Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքի մեջ, սովետական դրոշի տակ ապրելով տնտեսական և քաղաքական ապահով պայմաններում՝ մեր ժողովուրդը ծավալել է իր ընդունակությունները և նվիրված աշխատել սոցիալիզմի կառուցման համար։ Սովետական ջերմ արևի տակ փթթել է նա, ծաղկել են նրա ընդունակությունները, լայն ծավալ են ստացել նրա կարողությունները, և սոցիալիստական տնտեսական ու կուլտուրական շինարարության մեջ գրավել է նա իր պատվավոր տեղը։ Այժմ, երբ Սովետական Միության ժողովուրդները ոտք են դրել կոմունիզմի շինարարության փուլը և Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության իմաստուն ղեկավարությամբ լայն ճակատով սկսել են կերտել կոմունիզմի հոյակապ շենքը, հայ ժողովուրդը ևս իր նվիրված մասնակցությունն է բերում այդ համամարդկային հոյակապ գործին։

Ինչպես ինքը հայ ժողովուրդը կենտրոնանում է իր ծաղկող հայրենիքում, այնպես էլ նրա կուլտուրան ու գիտությունը կենտրո-

նանում են հայրենի հողի վրա։ Հայագիտությունը, որը նախքան Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը շոմեր իր հայրենի հողը և, ի պատիվ գիտության ժրաջան մշակների, զարգանում էր Մոսկվայում, Պետերբուրգում, Բեռլինում, Լայպցիգում, Փարիզում, Լոնդոնում և այլուր, 40 տարի առաջ արմատներ գցեց իր հայրենի հողի մեջ։ Սովետական գիտնականների ձեռքով այժմ ծաղկում է ու զարգանում հայրենի հողի վրա, սովետական հողի վրա։ Ժողովածվում տպագրված նյութերից ընթերցողին հայտնի կդառնա այն մեծ ծավալը, որ ստացել է ի շարս մյուսների հայագիտության ճյուղերից մեկը՝ հայ լեզվաբանությունը Սովետական Հայաստանում։ Լեզվաբանների հին սերնդի անվանի ներկայացուցիչներ՝ Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ս. Մալխասյանցը, Գ. Ղափանցյանը ծավալեցին փրենց գիտական գործունեությունը այս անցած 40-ամյակի ընթացքում, և կնքեցին իրենց մահկանացուն հայրենի հողում՝ հարուստ ժառանգություն թողնելով լեզվաբանների սովետական սերընդին։ Այդ նույն նյութերից պարզ կդառնա, թե ինչպես հայ լեզվաբանների սովետական սերունդը պատվավոր կերպով զուգակցում է ստացած տրադիցիաներին սովետական նորույթը և լայն ճակատով ուսումնասիրում հայոց լեզվի, լեզվական ոճի և լեզվաբանության հարցերը։ Այդ նյութերից կերևա հարցերի այն բազմազանությունը, որ հանդիսանում է լեզվաբանական մեր սերնդի, հատկապես երիտասարդ սերնդի, հետաքրքրության առարկան։ Ժողովածվում զետեղված են մեծ մասամբ երիտասարդ լեզվաբանների աշխատությունները, որպեսզի երևա նաև մեր գիտության զարգացման վաղվա օրը, միաժամանակ շատ համառոտ կերպով տրված են մեր 40-ամյա նվաճումները՝ ցույց տալու համար ավագ սերնդի աշխատանքների արդյունքները։ Անցած քառասուն տարվա ընթացքում հախուռն կերպով զարգացել ու զարգանում են հայ ժողովրդի տընտեսությունը, սոցիալիստական կուլտուրան, գիտությունը։ Այդ շարքում ևս զարգացել, զարգանում է ու կզարգանա հայ լեզվաբանությունը։ Դրա մեծագույն գրավականն է Լենինյան Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության գորովալից խնամքը հայ ժողովրդի, նրա լեզվի ու կուլտուրայի նկատմամբ սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում։

ՀՍՍՌ ԳԱ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ